

Կենսագրություն Հայկ Փիլոյան

“Լույս”-ի կրթաթոշակառուն բիզնես կառավարման մագիստրոսի կոչում է հայցում Հարվարդի բիզնես դպրոցում, ԱՄՆ



2005 թ. ավարտել եմ Թաֆտս (Tufts) համալսարանը՝ ստանալով Քանակական տնտեսագիտություն և միջազգային հարաբերություններ մասնագիտության բակալավրի աստիճան: Թաֆտսում ուսումնառության տարիներին եղել եմ Հայկական ակումբի նախագահ, Միջազգային ակումբի ակտիվ անդամ և ժամանած ուսանողների ակադեմիական առաջնորդ:

Ուսումնառության 3-րդ տարվա ընթացքում մեկ կիսամյակ սովորել եմ Փարիզի Կաթոլիկ համալսարանում, իսկ ավարտական կուրսին նախորդող ամռանը աշխատել եմ Հոնգ Կոնգում՝ հեռահաղորդակցման մի ընկերությունում:

Թաֆտսն ավարտելուց հետո աշխատել եմ Ֆինանսների և զանգվածային օրինագանցությունների ոլորտում՝ Նյու-Յորքի NERA տնտեսական խորհրդատվական կազմակերպությունում: Մեկ ու կես տարի NERA-ում աշխատելուց հետո վերադարձել եմ Երևան, որտեղ աշխատել եմ KPMG-ի խորհրդատվական բաժնում:

2007 թ. սեպտեմբերին մեկնարկել եմ իմ MA մագիստրոսական ծրագիրը Ֆլեթչերի Իրավունքի և դիվանագիտության բարձրագույն դպրոցում: Ամառային արձակուրդների ընթացքում աշխատել եմ Տոկիոյում՝ Hitachi հետազոտական ինստիտուտում: 2009 թ. ավարտել եմ Ֆլեթչերի դպրոցը՝ ստանալով երկու մասնագիտացում՝ Միջազգային բիզնես և իրավունք ու Բանակցություններ: Ֆլեթչերում սովորելիս աշխատել եմ որպես բակալավրիատի դասախոսի օգնական և Ֆլեթչերի հրավիրված Դիվանագետի հետազոտող օգնական:

2009 թ. սեպտեմբերից Հարվարդի բիզնեսի բարձրագույն դպրոցի Բիզնեսի կառավարման մագիստրոսական ծրագրի ուսանող եմ: